ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱ
Ն ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 30-ը հուլիսի 2019թ.
Ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, Ա. Մուրադյան,

գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԾ առաջատար մասնագետ, Ռ. Չաթոյան,
հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց թիվ **ԳԲՔԱ-LO-2019/44 և ԳԲՔԱ-ՆԳ-2019/44** որոշումները քննարկելու վերաբերյալ.

2. **«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի** կողմից, (որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) որպես շտկում ներկայացված որակավորման փաստաթղթերը ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության կազմած լինելու մասին.

3. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում **«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ի** ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկանքի քննարկման մասին.

4. **Ա/Ձ Նաիրի Թորոսյանի Նաիրի Թորոսյանի** կողմից ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության կազմած լինելու մասին.

5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց թիվ ԳԲՔԱ-LO-2019/44 և ԳԲՔԱ-ՆԳ-2019/44 որոշումները քննարկելու վերաբերյալ.

(Ա. Մաղաքյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգը 24.06.2019թ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել էր, սակայն **ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած թիվ ԳԲՔԱ-LO-2019/44 որոշմամբ** «Նարսան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ամբողջությամբ մերժվել է՝ ***անհիմն լինելու պատճառաբանությամբ***, ուստի գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով **ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշմամբ,** 2019թ. հունիսի 14-ի ժամը՝ 14:[00]-ի **N11** և 2019թ. հունիսի 25-ի ժամը 12:[00]-ի **N13** արձանագրություններով կայացրած որոշումները թողեց առանց փոփոխության, ըստ որի ընթացակարգի 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց «ՄԱՆԳՈՒԳ» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել էր բավարար՝ հրավերի պահաջներին համապատասխան:

Սույն ընթացակարգը 26.06.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/44 ծածկագրով բողոքարկվել էր նաև «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից, (որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ): Ներկայացված բողոքի հիման վրա (որը պաշտոնական կայքում (gnumner.am) հրապարակվել էր 29.07.2019թ. ժամը 09:31-ին) **ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից** 25.07.2019թ. կայացվել էր **թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/44 որոշումը,** ըստ որի «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարվել է մասնակի, որով՝

ա. Պարտավորեցվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

* «Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների հայտը մերժելու մասին որոշումը.

* Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու և վերջինիս՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր պահանջելու մասին որոշումը.

բ. Բողոքը պահանջի 2-րդ և 5-րդ կետերի մասով մերժել:

1.2 Առաջնորդվելով **ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.07.2019թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/44** որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշեց չքննարկել 6-րդ չափաբաժնի մասով 2019թ. հունիսի 25-ի ժամը 12:^{00}-ի **N13** արձանագրությամբ «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, որպես շտկում պահանջված որակավորման փաստաթղթերը և միաժամանակ քննարկելով «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից, (որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ), ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, գնահատող հանձնաժողովը այն գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան:

1.3. «Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում 28.06.2019թ. ներկայացվեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.06.2019թ. տրված տեղեկանք, առ այն, որ «Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ 26-ը հունիսի 2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց տվյալ մասնակցի տվյալները չուղարկել լիազորված մարմին:

1.4. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 3-րդ չափաբաժնի մասով «Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ի հայտի մերժման արդյունքում 1-ին տեղ զբաղեցող ճանաչված Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ **Հավելված N 6-ը** (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և **Հավելված 6.1-ը** (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց գնանշման հրավերի պահանջներին համապատասխան:

1.5. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների որոկավորման փաստաթղթերը և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.6 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ռ. Չաթոյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան